Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025թ. փետրվարի 3-4-ը Ծագման փոխկապակցման գլոբալ ֆորումին և նույն վայրում փետրվարի 5-7-ը ՀՄԿ Ծագման կանոնների տեխնիկական կոմիտեի 43-րդ նստաշրջանի նիստին մասնակցելու նպատակով ք. Բրյուսել իրականացված գործուղման արդյունքների վերաբերյալ

1.Անունը, ազգանունը.

Տիգրան Սարգսյան՝ ՀՀ ՊԵԿ Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության պետի տեղակալ

Միեր Ուլիխանյան՝ ԱՏԳ ՄՍՀՎ Դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2.Գործուղման վայրը և ժամկետները.

Համաշխարհային Մաքսային Կազմակերպություն, Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2025թ. փետրվարի 3-8 ը

3.Հրավիրող կողմը.

Համաշխարհային Մաքսային Կազմակերպության Ծագման կանոնների Տեխնիկական Կոմիտե՝ ԾԿՏԿ (**TCRO)**

4.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցությունը Համաշխարհային Մաքսային Կազմակերպություն կազմակերպած Ծագման փոխկապակցվածության գլոբալ ֆորումին, ինչպես նաև Ծագման Կանոնների Տեխնիկական Կոմիտեի 43-րդ նիստին, որի նպատակն է պարբերաբար քննարկել ծագման երկրի որոշման կանոնների, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) Ծագման կանոնների համաձայնագրի (Agreement on Rules of Origin (ARO)) դրույթների միանման կիրառման հիմնահարցերը պրեֆերենցիալ և ոչ պրեֆերենցիալ ծագման հավաստագրերի տրամադրման կանոնները և դրանցից բխող համապատասխան որոշումների ընդունումը:

5.Քննարկված թեմաները.

Ծագման փոխկապակցվածության գլոբալ ֆորումի ընթացքում պանելային քննարկումների ձևով հնչեցվեցին Ծագման կանոնների որոշման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր: Պանելային քննարկումների ընթացքում իրենց երկրների առկա վիճակը ներկայացրեցին մի շարք պետությունների մաքսային մարմինների և Ծագումը հավաստելու լիազորություններ ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչները: Մանրակրկիտ և հանգամանալից շնորհանդեսներ ներկայացրեցին նաև Առևտրի Միջազգային Պալատի (ICC) և ՄԱԿ-ի Մաքսային և Առևտրի Զարգացման Գործակալության (UNCTAD) ներկայացուցիչները, որոնց ընթացքում ներկայացվեց աշխարհում ԾՀ տրամադրման և ստուգման գործընթացների պարզեցմանն ուղղված հիմնական տենդենցները: Հստակեցվեց, որ ծագման կանոնների որոշման ժամանակ առկա են որոշակի բարդություններ և խոչընդոտներ: Ծագման կանոնները, փաստորեն, բացի տնտեսական լծակից հանդիսանում են նաև լուրջ քաղաքական լծակ այս կամ այն պետության կամ պետությունների ձեռքում, որը կարող է ինչպես պարզեցնել, այնպես էլ էականորեն սահմանափակել: Նշված խոչընդոտների վերացումը, Ծագման հավաստագրի (ԾՀ-CO) ստուգման հետ կապված մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի տևողության առավելագույն կրճատումը համարվում են ժամանակակից զարգացած պետությունների մաքսային մարմինների առաջնային նպատակներ: Համաշխարհային առևտրի ծավալների շեշտակի աճի, ինչպես նաև միջազգային առևտրի նոր էլեկտրոնային տեսակի ծավալների աճին զուգահեռ մեծանում են նաև արտադրող պետությունների արտահանմանն ուղղված իրացման ծավալները և մաքսային մարմինների առաջ կանգնում է մաքսային ձևակերպումների պարզեցման և ժամանակի կրճատման, սեփական արտադրողների արտադրանքի իրացմանը նպաստելու պահանջը: Ի թիվս մաքսային հսկողության այլ գործընթացների, լուրջ ուշադրություն է դարձվում նաև ԾՀ տրամադրման, վերջինիս վավերության, ինչպես նաև հավաստագրի տրամադրման հիմքում ընկած ապրանքների բավարար վերամշակման չափանիշների կիրառման ճշտության ստուգման համար ծախսվող ժամանակի կրճատմանը: Եթե պրեֆերենցիալ ԾՀ տրամադրման համար առկա են համապատասխան համաձայնագրերով կանոնակարգված դրույթներ, ապա ոչ պրեֆերենցիալ ԾՀ տրամադրման դեպքում միասնական կաննոներ չեն գործում, որի պատճառով միևնույն ապրանքը կարող համարվել տարբեր երկրներից ծագած, որն իր հերթին բերում է խառնաշփոթի և երկակի մեկնաբանությունների: Ծագման սերտիֆիկացման գործընթացը հնարավորինս պարզեցնելու նպատակով ՀՄԿ կողմից առաջարկվում է ներդնել մի շարք պարզեցումներ, դրանցից են՝

1. ԾՀ տրամադրող լիազոր մարմինների թվաքանակի ավելացում, խոշոր արտադրող այնպիսի ընկերություններին հավաստագրերի տրամադրման հնարավորության ընդձեռում, որոնք կբավարարեն օրինապահության որոշակի չափանիշների և կստանան «Լիազորված Արտահանող» կարգավիճակը:

2. Օրինապահության աճին զուգահեռ բիզնես հանրության շրջանում ծագման կանոնների ուսուցման և ամրագրման միջոցով աստիճանական անցում ինքնահայտարարագրման և ինքնահավաստագրման (self certification) գործընթացներին:

3. ԾՀ թվայնացում, որի դեպքում երկրների միությունները և առանձին երկրներ աստիճանաբար անցում են կատարելու թղթային ԾՀ-ներից թվային ԾՀ-ների: Թվայնացման դեպքում հնարավորություն է առաջանում ԾՀ թվային տեղեկատվությունը նշանակման երկրի մաքսային մարմիններին անմիջապես ներկայացնելու, նույնիսկ մինչև ապրանքների ժամանանումը՝ համապատասխան հսկողություն իրականացնելու և ԾՀ նույնականացնելու նպատակով:

4. ԾՀ թվայնացումը թույլ է տալու ինտեգրել հավաստագրման գործընթացը մեկ պատուհան համակարգում, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից կիրառվող ավտոմատ հայտարարագրման և ռիսկերի կառավարման համակարգերում, որը կտանի ապրանքների ծագման մաքսային հսկողության ավտոմատ իրականացմանը, ամբողջովին բացառելով մարդկային գործոնը: Առաջարկվում է կիրառել «Ուղարկել և ստանալ» (PUSH and PULL) երկու համակարգերից որևէ մեկը: Առաջինի դեպքում ԾՀ թվային տվյալները համապատասխան տեղեկատվության հետ միասին արտահանման երկրի լիազոր մարմնից մաքսային մարմինների միջոցով ուղարկվում է ստացող երկրի մաքսային մարմին, իսկ երկրորդ դեպքում կարիքը լինելու դեպքում ստացող մարմինն է խնդրարկում և ստանում համապատասխան տեղեկատվությունը:

5. Թվայնացմանը զուգահեռ անվտանգության մակարդակի բարձրացում՝ թվային յուրահատուկ ստորագրությունների համակարգերի ներդրման միջոցով, որի դեպքում համապահասխան հարթակներում հնարավոր կլինի պարզ տարբերակելու ԾՀ պարունակվող բոլոր տեղեկությունները, ստուգելու տրամադրման ժամանակ կիրառված կանոնների ճշտությունը:

ԾԿՏԿ (**TCRO**) 43-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը: Նախ լսվեց 42-րդ նստաշրջանի ընթացքում առաջադրված աշխատանքային ծրագրի ընթացքը, ներկայացվեց նաև ստեղծված ծագման ենթակոմիտեի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը: Իրազեկվեց, որ 42-րդ նստաշրջանի ընթացքում որոշված ապրանքների յուրահատուկ կանոնների վերաբերյալ հետազոտությունը, որի արդյունքներն արդեն հրապարակվել են ՀՄԿ կայքի համապատասխան բաժնում: Քննարկվեց և հաստատվեց ներկա նստաշրջանի օրակարգը: Ներկայացվեցին ծագման հայտարարագրման ընթացքում առաջ եկող այն անհամապատասխանությունները և բացթողումները, որոնք չեն հանգեցնում իրավախախտումների: Թարմացվեց ՀՄԿ կողմից հրապարակված ծագման անհամապատասխանությունների ուղեցույցը, որը հանդիսանում է ծագման անհամապատասխանությունների բացահայտման գործիք:

Քննարկվեց ՀՄԿ 2022-2025թթ ռազմավարական ծրագրի մաս հանդիսացող «կանաչ մաքսատուն» մոտեցումը, որը հատկապես վերաբերվում է ծագման կանոններին:

ԾԿՏԿ (**TCRO**) 42-րդ նստաշրջանից որպես առաջնահերթություն, առաջ էր քաշվել ազատ տնտեսական գոտիներում արտադրվող և վերամշակվող ապրանքների նկատմամբ ծագման կանոնների կիրառման առանձնահատկություններին վերաբերվող հիմնահարցերը: Նախատեսվեց մշակել անդամ պետությունների լավագույն փորձի վրա հիմնված ազատ տնտեսական գոտիների ծագման կանոնների համապատփակ ուղեցույց:

Քննարկվեցին նաև Կիոտոյի վերանայված կոնվենցիայի հատուկ K հավելվածին նվիրված հիմնահարցեր, առաջ քաշվեց հավելվածի որոշ դրույթների վերանայման անհրաժեշտությունը:

ԾԿՏԿ-ում քննարկվեց նաև ծագման կանոնների ոլորտում կարողությունների զարգացման և կրթական ծրագրերի առկա իրավիճակը: Ներկայացվեցին անդամ երկրների և ՀՄԿ կողմից իրականացված ուսուցողական ծրագրերը, որոնք ուղղված են ինչպես մաքսային և այլ պետական մարմինների, այնպես էլ բիզնես ոլորտի ներկայացուցիչների կարողությունների բարելավմանը: Ներկայացվեցին ՀՄԿ-Ճապոնիա Միջազգային Համագործակցության կոմիտեի (JICA) վերապատրաստման խորացված ծրագրի, ինչպես նաև ԵՄ-ՀՄԿ ծագման կանոնների Աֆրիկայի ծրագրի առանձնահատկությունները, դրանց հնարավորությունները և ստացվող արդյունքի արդյունավետությունը:

Ներկայացվեց նաև խելացի մաքսատան ծրագրի զարգացումը, որտեղ ի թիվս այլ ոլորտների արհեստական բանականության և ինքնուսուցվող համակարգերի տարրեր են կիրառվում նաև ծագման կանոնների կիրառման ճշտության ստուգման, առկա անհամապատասխանությունները և խախտումները բացահայտելու ուղղությամբ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ԾԿՏԿ 43-րդ նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ներկայացվել են մի քանի շնորհանդեսներ, դրանց ամփոփման ժամակնակ իրականացվել են խորացված քննարկումներ, որի ժամանակ անդամ պետությունների ներկայացուցիչներն արտահայտել են իրենց տեսակետները, դիտողություններն ու առաջարկությունները՝ բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԾԿՏԿ 43-րդ նիստին փաստաթղթեր ստորագրում չէր նախատեսված:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառմանը մասնակցելը թույլ կտա ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող ծագման կանոնների ճիշտ կիրառման և ծագման հավաստագրերի հետ տարվող աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ: Ծագման կանոնների տեխնիկական կոմիտեի նիստերի մասնակցությունը կարևորվում է հատկապես ապրանքների ծագման հսկողության նոր գործիքակազմերի, սխալները և բացթողումները բացահայտելու նոր մեթոդների ուսումնասիրության առումով: Հաշվի առնելով անդամների լայն մասնակցությունը, իրականացվել է նաև ծագման հսկողության ընթացքում ինչպես առաջավոր, այնպես էլ զարգացող պետությունների փորձի և մոտեցումների ուսումնասիրություն:

Հաշվի առնելով ծագման կանոնների ճիշտ կիրառման առանձնահատկությունները և դրանց բազմազանությունը, ինչպես նաև Ծագման Հավաստագրերի թվայնացման և ստուգման գործընթացի ավտոմատացման հեռանկարները, նպատակահարմար կլինի առաջիկայում, ՀՄԿ աջակցությամբ ապրանքների ծագման երկրի որոշման և ծագման կանոնների վերաբերյալ կազմակերպել և իրականացնել կարողությունների բարելավմանն ուղղված ուսուցման ծրագիր, որում կարող են ընդգրկվել ԾՀ հետ առընչվող բոլոր մարմինները, մասնավոր բիզնեսը: Առաջիկայում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև ստորագրված ազատ առևտրի մասին համաձայնագիրը, մաքսային ձևակերպումների հետագա պարզեցման և ծախսվող ժամանակի տնտեսման նպատակով ՀՀ-Վրաստան փոխադարձ առևտրում առաջարկվում է ներդնել կիրառվող ԾՀ թվայնացում և դրանց ստուգման գործընթացի ավտոմատացում՝ որպես պիլոտային ծրագիր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Տիգրան Սարգսյան _____

Միհր Ուլիխանյան _____

10"02"2025թ.